

**ԿՈՄՄՈՒՆԻԶՄ**

(Նարունակութիւն \*)

Հին քրիստոնեական Կամբունիզմի անկումը.

Ըստանիքի, սպառողութեան կոմմունիզմի ու զուարձութեան մէջ եղած հակառակութիւնը կարող էր կատարելապէս արհամարհել միայն բացառիկ ոգեսորութիւնը: Այդպիսի ոգեսորութիւն էլ գոյութիւն ունէր առաջին քրիստոնեայ համայնքներում: Բայց ինչքան բազմանում էին քրիստոնեաները, այնքան, հասկանակի է, որ նրանց թուի համեմատ էլ քիչ կլինէին նրանց մէջ բացառիկ ձիքով բնաւորութիւններ: Խոկ ընկնող չոռովմի միջակ մարդկանց մէջ սոցիալական յարաբերութիւնները զարգացնում էին ամեն տեսակ յատկութիւններ, միայն ոչ գործունեայ ինքնազոհութիւն: Այդ տեսակէտից ոչ մի դասակարգ բացառութիւն չէր կազմում:

Դրա համար էլ քրիստոնէական համայնքների մէջ մէկ-մէկ ընտանիք ունենալը գերիշխող եղաւ սպառողութեան կոմմունիզմի վրայ: Ըստանեկան հացկերոյժները ընդհանուր օրէնք դարձան, խոկ սիրոյ ճաշերը հետզհետէ սահմանափակուեցան փառաւոր դէպքենով: Այդ սահմանափակումով էլ նրանք պահպանուեցան քրիստոնէական առաջին տարիների ընթացքում. ապա բոլորովին ընկան, գարձան միայն աղքատներ կերակրելը, և այդ ճաշերը ժամանակ առ ժամանակ հարուստներն էին տալիս, բայց իրանք այդ ինջոյքներին չէին մասնակցում:

Ըստանեկան հոգսերը նորից առաջնակարգ հարց ներկայացան. համայնքին, եկեղեցուն պատկանում էր միայն այն, ինչ որ պէտք չէր ընտանիքին: Համայնքի բոլոր անդամների ստացուածքից ընդհանուր կերպով օգտուելու փոխարէն ընդհանուր դրամարկղ հաստատուեց, որի մէջ հաւաքուում էր առանձին անհատների փողերից աւելացածը: Եկամուտից աւելացածը, որ ունենում է մարդս բոլոր ծախըերը ծածկելուց յետոյ, պէտք է արուի եկեղեցուն: Ահա թէ վարձի մէջ ինչ ձև է ընդունել խոկոյն քրիստոնէական կոմմունիզմը:

Բայց որովհետեւ կայսրութեան ժամանակների սոցիալական

\* ) Տես Արարատ Թիւ ԺԲ.

յարաբերութիւնները, որ անհնար էին դարձնում կոմմունիզմի գործնական իրագործումը, նպաստում էին կոմմունական գաղափարների դարգացման, ուստի նախնական քրիստոնէութեան կոմմունական աւանդութիւնները երկար ապրեցին. շարունակ նոր կոմմունական աղանդներ էին ծագում, այլ և եկեղեցական կազմակերպութիւններից միւսների վրայ գերիշխանութիւն ձեռք բերողը գեռ երկար պահեց կոմմունական տեսութիւնը:

Եկեղեցական հայրերը առաջոււան պէս մտրակում էին հարստութիւնն ու անհաւասարութիւնը: «Թշուառներ», բացականչում է չորրորդ դարում Բարսեղ Մեծը, դեմելով հարուստներին. «Ի՞նչ էք ասելու Յաւիտենական գատաւորին արդարաւալու համար ... ինձ պատասխանում էք. միթէ ես իրաւունք չունիմ պահելու ինձ համար ինչ որ ինձ է պատկանում. բայց ես կհարցնեմ ձեզ՝ ի՞նչն էք ձեր սեպհականութիւն համարում ո՞ւմնից էք ստացել այն: Դուք այն մարդուն էք նմանում, որ աշխատում է թատրոնի մէջ բոլոր տեղերը բռնել և արգելել ուրիշներին թատրոն մտնելու՝ գրաւելով իւր համար այն, ինչ որ բոլորի համար է պատրաստուած:»

Հարուստներն ինչով են հարստանում,—եթէ ոչ այն առարկաների գրաւմամբ, որ բոլորին է պատկանում: Եթէ իւրաքանչիւր որ աւելի շվերցնէր, քան իրան է պէտք և մնացածը տարուրիշներին, այն ժամանակ հարուստ և աղքատ չէր լինիլ»:

Դեռ վեցերորդ դարում Գրիգոր Մեծը գրում է. «Բաւական չէ ուրիշներից չխլել նոցա սեպհականութիւնը — մարդմեղքից աղատ չէ, քանի որ իւր մօտ պահում է ունեցուածքը, որ Աստուած բոլորի համար է պատրաստել:»

Ով իւր ունեցուածքից ուրիշներին չի տալիս, նա մարդառապան է և աւազակ, որովհետեւ իւր մօտ պահում է այն, ինչ որ կարող էր աղքատների ապահովութեան ծառայել. կարելի է ասել, որ նա ամեն օր սպանում է նոյնքան մարդ, քանի մարդ կարող էր նրա աւելացածներից ապրել: Եթէ մենք մասն ենք հանում կարիք ունեցողներին, ապա չենք տալիս այն, ինչ որ հէնց նրանց է պատկանում: Այդ ողորմածութեան գործ չէ, այլ պարտքի վճարում\* \*):

\* \*) Ցառաջ է բերած Fr. Villegardelle-ից.—Histoire des idées socialistes avant la révolution française, Paris, 1846, էջ 74 եւ շաբունակութիւն. Հեղինակը նոյն բովանդակութեամբ շատ վկայութիւններ է բերում առաջին զարերի եկեղեցու ուրիշ վարդապետների գրուածքներից. Ափսոս, որ չի յայտնում. Թէ ինչ տեսակ երկերից է նանել այդ վկայութիւնները. Դրա համար մենք հնարաւորութիւն չունինք սառագելու դրանք:

Նախնական քրիստոնէութեան կոմմունիտական ընաւորութիւն ունեցող ամենանշանաւոր վկայութիւններց մէկը գբառնուում է ո. Յովհան Ասկերերանի երկերում։ Ծնուած լինելով 317 թ., Անտիոքում՝ մայրաքաղաքի արքեպիսկոպոսութեան առաջնանին հասաւ։ Բայց իւր անվեհերութիւնը, որով մտրակում էր մայրաքաղաքի, մանաւանդ արքունիքի անբարոյականութիւնը, այն տեղին հասցըեց, որ Արքադիոս կայուը աքսորեց նրան։ Նա մեռաւ աքսորում (Հայաստանում) 407 թ։ Իւր տասն և երկու երրորդ քարոզում (Հոմիլէոն) Գործք առաքելոցի մասին՝ այդ խիգախ մարդը կանգ առաւ առաջին դարերի քրիստոնեաների կոմմունիզմի վրայ։ Նա վկայութիւն է բերում հետեւեալ տեղը Գործք առաքելոցից, «Եւ չնորհք մեծ էին ի վերայ ամենեցուն—ոչ գոյր ի նոոտա աղքատ ոք» \*): Այդ նրանից էր, շարունակում է նա, որ ոչ ոք իւր ունեցուածքից մի քանի հրանք չէր համարում, այլ ամեն ինչ հասարակաց էր նոցահամար» \*\* :

«Ենոքհը կար ամենքի վրայ, որովհետեւ ոչ մի աղքատ չը-  
կար նոցա մէջ, այսինքն նրա համար, որ նրանք տռատութեամբ  
տալիս էին, որպէս զի ոչ սք աղքատ չմնայ: Եւ այդ այնպէս  
չէր, որ նրանք մի մասը տային, իսկ մնացածը պահէին իրանց  
համար, կամ ամեն բան տային իբրև իրանց սեպհականութիւնն  
նրանք ամեն անհաւասարութիւն ոչնչացրել և ապրուժ էին  
մեծ առատութեան մէջ: Եւ այդ անում էին շատ արժանաւոր  
կերպով: Նրանք չէին յանդգնում չքաւորների ձեռքը ոզորմու-  
թիւն գնելու, հպարտ զիջողութիւն չէր նրանց արածը, այլ  
գնում էին առաքեալների ոտքերի մօտ և նրանց տէր և բաշխող  
ոզորմութեանց էին ճանաչում: Ով ինչ բանի կարեք ունէր, հա-  
մայնքի պահեստից էր վերցնում և ոչ թէ որևէ մէկի մասնաւոր  
սեպհականութիւնից: Այդ այն օգուտն ունէր, որ տաւողները  
մնափառութեան մէջ չէին բնկնում:

«Եթէ մենք էլ սկսենք այդ ձեռվ վարուել, չափազանց  
բաղդաւոր կլինէինք, —ինչպէս հարուստաները, այնպէս և աղ-  
քատները, և աղքատները աւելի շեն վաստակիլ, քան հա-  
րուստաները ... որովհետեւ տուողները գրանցով ոչ միայն շեն  
աղքատանում, նրանք աղքատներին էլ հարստացնում են:

«Այս բանը քննենք. ամենքը իրանց գոյքը գալձնում էին ընդհանուրի սեպհականութիւն։ Թող ոչ ոք այդ բանից չդժգոհէ

<sup>\*)</sup> Φηρδρ., b. 55—54.

<sup>\*\*) Ibid., vol. 52.</sup>

—ոչ հարուստը, ոչ էլ աղքատը։ Ինչ էք կաթօռում, ինչքա՞ն վող կհաւաքուի։ Կարծում եմ, —որովհետեւ այդ չե կարելի առ ուշ հաւաստի կերպով, —որ եթէ ամենքը տային իրանց փողելը, հողերը, գոյքերն ու տները (ես ստրուկների մասին չեմ խօսում, որովհետեւ առաջին քրիստոնեաները ստրուկ չեն ունեցել, —երևի նրանք արձակել են իրանց ստրուկներին), կհաւաքուէր միլիոն գբուանքայ ոոկի, —իսկ ամենայն հաւանականութեամբ մինչեւ անգամ երկու կամ երեք անգամ աւելի։ Ապա առացէք ինձ, քանի մարդ է ապրում մեր քաղաքում (Տայրագաղաքում)։ Քանի՞ քրիստոնեայ կայ, արդեօք ո՞չ հարիւր հազար։ Բայց քանի հեթանոս և հրէայ, քանի հազար գրուանքայ ոոկի կհաւաքուէր այստեղ։ բայց քանի՞ աղքատ ունինք։ կարծում եմ ոչ աւելի քան յիսուն հազար, ինչքա՞ն վող էր հարկաւոր նոցա ամեն օր կերպուէլու համար։ Եթէ նրանք ընդհանութը սեղանից կերպուէին, —ծախքը առանձնապէս շատ չէր լինիլ։ Ի՞նչ կանէինք մեր չափազանց մեծ հարստութիւնը։ Կարծում էք, թէ երբ և իցէ կսպառուի այն, մեզ վրայ չէ՞ր իջնիլ Աստծոյ օրհնութիւնը հազար անգամ առատ կերպով։ մենք երկիրը երկինք չէնք դարձնիլ։ Եթէ այդպիսի կարգը երեք կամ չորս հազարի նկատմամբ այնպիսի փայլուն արդիւնքներ տուեց (առաջին քրիստոնեաների ժամանակ), և նրանց մէջ ոչ մի չքաւոր չկար, ապա որքան առաւել լաւ կլինէր այդ այսքան բաղմաթիւ մարդկանց նկատմամբ։ Միթէ՞ նորեկներից իւրաքանչեւը մի քան չէր աւելացնիլ։

«Գոյքերի բաժան-բաժան անելը ահագին ծախքեր է պատճառում, որի հետեւանքը լինում է աղքատութիւն։ Վերցնենք մի տուն ընտանիքով հանդերձ—մարդ, կինը և տասն որդիք։ Կինը մանում է, մարդը գործ է որոնում շուկայում։ Նրանց ծախքը ե՞րբ շատ կլինի, մի տան համայնակեցութեամբ, թէ բաժան-բաժան։ Ակնյայտնի է, որ բաժան-բաժան։ Եթէ տասն որդիքը բաժանուին, նրանց պէտք կլինի տասն տուն, տասն սեղան, տասն ծառայ, և այլ բաներն էլ պէտք է աւելանան նոյն չափով։ Իսկ ստրուկների հետ ի՞նչպէս են վարուում։ Միթէ՞ նրանց միասին չեն կերպակում ծախքը պականեցնելու համար։ Բաժան-բաժան լինելը միշտ վատնողութեան է հասցնում, իսկ միասին օգաուելը ունեցածի պահպանութեան։ Այդպէս են ապրում այժմ վանքերում, այդպէս են ապրել մի ժամանակ հաւատացեալները։ Բայց ո՞վ է նրանց մէջ քաղցից մեռել, ով չե բաւականին յագեցել, և այնուամենայնիւ մարդիկ այդ կարգեց աւելի են վախենում, քան անափ ծովը ցատքելուց։ Դէ՞հ, հիմա փորձենք և համարձակ գործի ձեռնարկենք։ Ի՞նչպիսի

մեծ բարեբաստիկ արդիւնք կլինէր: Որովհետեւ—եթէ այն ժամանակ, երբ հաւատացեալների թիւը այնպէս աննշան էր, երեք, հինգ հազարի էր հաւատարուում, երբ ամբողջ աշխարհը թշնամաբար էր վերաբերուում դէպի մեզ, երբ ոչ մի տեղից միևնիթարութիւն չկար, մեր նախնիքը այնքան վճռականօրէն են գործել, որչափ աւելի վստահութիւն պիտի ունենանք այժմ, երբ Ս.ստուծոյ օր հնութեամբ ամեն տեղ հաւատացեալներ կան: Ո՞վ կկամենար այսպիսի դէպում հեթանոս մնալ: Կարծում եմ, ոչ ոք: Մենք բոլորին կգրաւ էինք և կտրամադրէինք դէպի մեղ» \*):

Յովհան Ոսկեբերանը իւր խորհրդածութիւնները վերջացրեց՝ հրաւերելով ձեռնարկել իւր առաջարկութիւնը իրագործելու:

Այդ քարոզը, որ այդքան աշխոյժ էր, զուա տնտեսադիտական, որ և իցէ կրօնական երեակայութիւնից հեռու, վերին աստիճանի նշանաւոր է ամեն տեսակէտից: Այդ պարզ նկարագրում է մեզ նախնական քրիստոնէական կոմմունիզմը, որի աւանդութիւնները այն ժամանակ դեռ կենդանի էին. բայց դա նոյնպէս ցոյց է տալիս, որ այդ արդիւնաբերութեան կոմմունիզմը չէր, այլ սպառողական: Յովհան Ոսկեբերանը աշխատում է իւր ունկնդիրներին հակել դէպի կոմմունիզմ, բացատրելով նոցա, թէ ընդհանուր տնային տնտեսութիւնը համեմամատաւ բար ինչքան օգաաւէտ է շատ տնտեսութիւնների բաժանելուց: Բայց ո՞վ պէտք է արտադրէ այն բոլորը, ինչ որ պէտք է այդ տնային տնտեսութեան համար, այդ մասին ոչ մի խօսք չի ասուում: Բանն այն է, որ այդ շրջանում ամեն բան առաջուայ պէս պէտք է մնայ:

Յովհան Ոսկեբերանի առաջարկութիւնը չիրագործուեց. նաև ինքն ասում է, թէ եկեղեցին ինչքան հեռացել է նախնական քրիստոնէանների կոմմունական կերանքից. «մարդիկ այդպիսի կեանքից աւելի են վախենում, քան անտակ ծովը նետուելուց»: Նոյնքան պարզ, ինչպէս Յովհան Ոսկեբերանը, խօսում էին նաև եկեղեցու այլ հայրեր: Քանի որ նոքա խիստ մտքակում էին հարուստներին, ուստի երկրորդ գարուց սկսած անյայտացան եկեղեցում ոչ միայն կոմմունական փորձեր, այլ և ոգին, հաւատարութեան և եղբայրութեան զգացմունքը: Այսուեղ կը կին յայտնի եղաւ, որ նիւթական յարաբերութիւն-

\* ) S. P. H. Ioanni Chrystomi opera omnia gyae extant. Paris, 1859 (Մինիէի հրատ. Patrologioe cureus completus) IX էջ 96—98:

Ները գաղափարներից աւելի ուժեղ են և տիրապետում են նոցա վրայ:

Իրեւի անընկճելի ոյժը ստիպեց եկեղեցուն իւր վարդապետութիւնը յարմարեցնել նրա տարածման պատճառով վովոխուող յարաբերութիւնների վրայ: Եւ որովհետեւ չէր կարելի ոչնչացնել կոմմանիստական աւանդութիւնը, ուստի աշխատում էին նրան մի յարմար բացատրութիւն տալ և մի շարք հնարքներով, որոնք այնչափ յատուի էին այն ժամանակուայ աւելի խորհող, քան հետազոտող փելփառփայութեան, այդ աւանդութիւնը հաշտեցնել իրականութեան հետ:

Այսուհետեւ քրիստոնէութիւնը բոլորովին հրաժարուում է աղքատութեան խնդիրը վճռելուց, հարուստների և աղքատների տարբերութիւնը ոչնչացնելուց: Եթէ առաջին քրիստոնեաները դեռ առում էին, որ հարուստը չի կարող մտնել երկարնե արքայութիւն, այն է նրանց համայնքը, մինչև իւր գոյքը չայց աղքաներին և ինքն էլ դառնայ աղքատ, որ մեայն աղքատները կարող են փրկուել, այդ զուտ կրօնական հասկացողութիւնները մեկնաբանուում էին փրկարերական, հոգեսրմաքով:

«Եկեղեցինք, ասում է Ռատցենգերը, եկեղեցական առաջին հայրերի հայեացքները բնորոշելով. «Միայն աղքաների համար էր նշանակուած, հարուստները հեռու էին նրանից ... Այդ գոյքից հրաժարուելն ոչ պարտաւորեցնեց կերպով կատարեալ հրաժարուել պէտք է լինէր նրանից. բաւական է, եթէ հարուստը հրաժարուում է գոյքով չափազանց զուարձանալուց, նրա հետ կապուելուց, մի խօսքով ադանութիւնից ... Եւ հարուստը պէտք է իւր սիրու կտրէ ամեն տեսակ երկրաւոր բառեփեց, նա իւր մէջ նկատելով մեայն մի կառավարչի, որին Առառուած է դրեւ, պէտք է գոյքին այնպէս տէրութիւն անէ, որ պէս թէ այն երան չի պատկանում. նա պէտք է վերցնէ իւր համար միայն ինչ որ իւր գոյտթեան համար անհրաժեշտ է, իսկ մնացած բոլորն իրեւ Առտծոյ հաւատարիմ կառավարիչ, աղքատներին առայց: Բայց աղքատն էլ այնչափ քեզ պէտք է երկրային հարստութիւն ձեռք բերելու ձգաէ, ինչքան և հարուստը \*):

Ինչպիսի նուրբ հնարագիտութիւն: Արգեն ոչ թէ իրան, այլ մեայն իւր սիրու պէտք է կտրէ հարուստը երկրային հա-

\*) Ratzinger, «Geschichte der Kirchlichen Armenpflege», Freiburg i. B. 1860. էջ 9. 10.

բառութիւնից. Նա պէտք է տիրապետէ գոյքին այնպէս, որպէս թէ այն չէ պատկանում իրան:

Բայց այդ թոյլ ձեռվ էլ քըիստոնէութիւնը, դարերի ընթացքում շատ բան է արել աղքատութեան դէմ եղած կուուի մէջ: Եթէ նա չի ոչնչացրել նրան, ապա նա նոյն կազմակերպութիւն մնաց, որ ամենից շատ ընդունակ էր իւր մթնոլորտում թուլացնելու ամբոխային չքաւորութիւնից հասած թշուառութիւններ: Կարելի է դրա մէջ էլ ամփոփուած է նրա յաջողութեան ամենամեծ պատճառը:

Բայց ինչքան աւելի էր աճում եկեղեցու ոյժը, այնքան ուժասպառ էր դառնում իւր ժամանակուայ սոցիալական խնդրի առաջ, որ և նրան հէնց ոյժ էր տալիս: Նա ոչ միայն անընդունակ երկեցաւ մինչև իւր ժամանակ դոյցութիւն ունեցող դասակարգային խարութիւններին վերջ դնելու, այլև և ինքը, ինչքան զօրեզանում և հարստանում էր, ստեղծում էր նոր դասակարգային տարբերութիւններ: Եկեղեցում կազմակերպուեց տիթոր դասը, կղերը, որին ենթարկուեցաւ ստեղծում, աշխարհականները: Սկզբում քըիստոնէական համայնքներում ակտագիտում էր կատարեալ ինքնավարութիւն: Նոցա հաւատագմատարներին, եպիսկոպոսներին և քահանաներին ընտրում էին համայնքի անդամները իրանց մէջից և հաշիւ էին ստանում նրանցից: Նոքա իրանց պաշտօններից ոչ մի օգուտ չէին քաղում:

Բայց մի քանի համայնքների մեծանալով և հարստանալով՝ նոցա ներկայացուցելների պարտաւորութիւնները այնչափ մեծացան, որ չէր կարելի գլուխ բերել՝ որևէ մասնագիտութեամբ զբաղուելով հանգերձ: Աշխատանքը բաժանուեցաւ, պաշտօնները քըիստոնէական համայնքների մէջ առանձին մասնագիտութիւն դարձան և նրանցով զբաղուող մարդկանց կլանեցին ըլլորովին: Եկեղեցական գոյքի հոգատարութիւնը աղքատների կեանքը պահելու համար անհնարին դարձաւ, հարկաւոր էր նրանով հանել թէ վարչութեան ծախքերը, ժողովական հաստատութիւնների պահպանութեան ծախքերը, և պաշտօննեաների ծախքերը:

Բայց համայնքի անդամների գլխաւոր խումբը ումնից է բազկացած: Հացկատակներից, որոնք երբէք չէին կարող պահպանել ռամկավարական կարգից ձեռք բերած ոյժը: Այդ անհնար էր նրանց համար եկեղեցում, ինչպէս և հասարակապետութեան մէջ: Եկեղեցում նոքա վաճառում էին այն և զիջանում եպիսկոպոսին, ինչպէս հասարակապետութեան մէջ Կեսարին:

Եպիսկոպոսին անցաւ նաև եկեղեցու, այն է համայնքի գոյքերի կառավարութիւնը և կարգադրութիւնը, նրանից էր կախուած, թէ ինչպէս և ինչք համար պէտք է գործ դնուեն եկեղեցու եկումուտները: Այդ նրան ահազին իշխանութիւն էր տալիս հացկատակիների բանուորի վրայ, մի եշխանութիւն, ոչ աւելի և աւելի էր մեծանում, ինչքան եկեղեցու հարստութիւնը գեզուում էր: Եպիսկոպոսները դարձան աւելի անկախ իրանց ընտրողներից, որոնք իրանք նրանցից կախում ունեին:

Այդ զարգացման հետ միաժամանակ սկզբում բոլորովին անկախ եկեղեցիների աւելի և աւելի մերձաւորումն տեղի ունեցաւ և կազմուեցաւ մի մեծ կազմակերպութիւն, հանրական եկեղեցի: Միատեսակ հայեացքներ, միատեսակ նաևածանքներն արդէն վաղ էին գրգել առանձին եկեղեցիներին յարաբերութիւն սկսել իրանց մէջ լիազօրների և թղթերի միջոցով—երկրորդ գարու վերջին Յունաստանում և Ասիայում շատ եկեղեցիներ արդէն կազմում էին հաստատուն կազմակերպութիւններ, որոնց բարձր կարգի մարմինները կազմում էին հաւատարմատարների ժողովները, եպիսկոպոսների սինօգները: Դրանով կը ճատառուեցին առանձին համայնքների ինքնավարութիւնները և եպիսկոպոսները բարձրացան համայնքի վրայ:

Վերջապէս բոլոր քրիստոնեայ համայնքները միանալով մի կապ յառաջ բերին և չորրորդ գարում տեսնում ենք արդէն կայտերական («Տիեղերական») ժողովներ (Առաջինը 325 թ., Կիեվայում):

Բայց ժողովներում այն եպիսկոպոսներն էին օգտուում աւելի ազդեցութեամբ, որոնք հարուստ և ուժեղ համայնքների ներկայացուցիչներ էին: Այսպէս, Հռովմի եպիսկոպոսը վերջի վերջոյ, արևմտեան քրիստոնեայ աշխարհի գլուխ կանգնեց:

Այդ ամբողջ զարգացումը կատարուեց ոչ առանց զօրեղ կռուի,—մղուած պետական իշխանութեան դէմ, որ չէր կամենում թոյլ տալ պետութեան մէջ նոր պետութիւն կազմուել, կռիւ առանձին կազմակերպութիւնների և իրանց ստորաբաժանմունքների մէջ, կռիւներ ժողովրդի և կղերի մէջ, որոնց առաջինն էր յաղթուում միշտ: Արդէն երրորդ գարում ամեն տեղ եկեղեցու պաշտօնական անձեր նշանակելու իրաւունքը ժողովրդինն էր: Եկեղեցիները դարձան մի սահմանափակ ընկերութիւն, որ ինքն իրան լցուցանում էր և ըստ իւր հայեցողութեան կառավարում էր եկեղեցական գոյքերը:

Այդ ժամանակից հռովմէական պետութեան մէջ եկեղեցին

դարձաւ այն կազմակերպութիւնը, որ քնդունակ մարդկանց առաջ ամենալաւ ասպարեզն էր բանում։ Քաղաքական ասպարեզը անհնար է դարձել այն ժամանակից, երբ գաղարել է քաղաքական կեանքը։ զենուորական ծառայութիւնը գրեթէ ամբողջովին վարձուած բարբարոսներին էր թողնուած, գեղարուենուն ու գետութիւնները քաշ էին տալիս լոկ իրանց ողբալի դոյութիւնը, իսկ ինքնավարութիւնը նուազում էր և հետզհետէ ընկնում։ Միայն եկեղեցումն էր թագաւորում կեանքն ու շարժում, այնտեղ գեռ և ամենից շուտ կարելի էր հասնել համայնական իշխանութեան։ Հեթանոս աշխարհի գրեթէ ամենը բան, ինչ որ եռանգուն էր և լելացի, անցել էր քրիստոնէութեան։ իսկ նորա մէջ՝ եկեղեցական ասպարեզին։ եկեղեցին, որ անընկճելի էր պետական իշխանութեան հեա վարած կռուի մէջ, սկսեց ինքը այդ իշխանութիւնը իրան ենթարկել։

Չորրորդ դարու ոկղըում, գահի խորամանկ թեկնածուն, Կոստանդինը, արդէն գտաւ, որ յազմութիւնը նա է տանելու, ով քրիստոնէական Աստծոյ ողորմածութեան կարֆանանայ, այն է իւր կողմը կդրաւէ քրիստոնեայ հոգեորականութիւնը։ Նրա գործակիցութեամբ քրիստոնէութիւնը տիրապետող դարձաւ և շուտով միակ կրօնը հռովմէական պետութեան մէջ։

Այդ ժամանակից եկեղեցու դոյքը մեծանալը առանձին արագութեամբ կատարուեցաւ։ Կայորները և մասնաւոր մարդիկ մրցում են իրար հետ ընծաներով նոյն աւժի արամագբութիւնը ձեռք բերելու։ Միւս կողմից կայորները աւելի և աւելի էին հարկաւոր համարում եկեղեցական գիւտանագիտութեան յանձնելու մի շարք պետական և վարչական գործեր, որոնց իրագործելու համար անընդունակ էր դարձել ընկած պետական գիւտանագիտութիւնը։

Առաջ համայնքի անդամների առւըքերը յօգուտ եկեղեցու կամաւոր էին բոլորովին։ Իսկ այն ժամանակ երբ եկեղեցին ոկտեց օգտուել պետական իշխանութեան հովանաւորութեամբ, նա սկսեց կանոնաւոր հարկերի մասին մտածել։ Մացրուեց Տասնուրդ, որ հաւաքուում էր սկզբում բարոյական աղքեցութեան ճանապարհով, իսկ յետոյ արդէն պարտադիր եղաւ \*):

Այժմ եկեղեցին չափազանց հարստացաւ, և միենոյն ժամանակ նրա կղերը բոլորովին անկախ գաղաւաւ աշխարհականներից։ Զարմանալի չէ, որ ինչքան աճում էր նրա հարստու-

\* ) Երկրորդ Տուրեան ժողովը (367 թ.) պահանջում է, որ հաւատացեալները տասանորդ տան ի միջի այլոց նաեւ ճորտերից։

թիւնը, նա այնքամն աւելի և աւելի գաղաքում էր իւր գոյքը յօդուտ աղքատների գործազրել: Կղերը ծախոսում էր այն իւր համար, ագահութիւնն ու վատնողութիւնը բուն գրեցին եկեղեցում, — առանձնապես հարուստ համայնքներում: — Հռովմում, կոստանդնուպօլսում, Աղքատնգրիայում ևն: Կոմիունիստական հաստատութիւնից նա դարձաւ հարստահարութեան ամենահսկայական մեքենայ, որի նմանը երբ և իցէ աշխարհը տեսնել էր Արդէն հինգերորդ դարում եկեղեցական հասոյթները չոքում մասի էին բաժանուած՝ երբեւ հռովմէական եկեղեցու ամուը կարգագրութիւն: Մի մասը պատկանում էր եպիսկոպոսին, միւրը կղերին, երրորդը ծառայում էր եկեղեցական կարիքների բաւարարութեան համար (եկեղեցու կառուցման և պահպանութեան ևն) և միայն չորրորդ մասն էր պատկանում աղքատներին: Աղքատները արդէն միասին միայն այնքամն էին ըստանում, ինչքան մի եպիսկոպոս:

Բայց հասոյթների այդ չորս մաս բաժանելն էլ, ամենաշատ ականականօրէն, մտցրած է ոչ թէ նրա համար, որ վնաս տրուի աղքատներին, այլ նրանց պաշտպանութեան համար և որպէսզի հոգեւոր հովիւները երանց վրայ չծախսեն բոլոր գոյքը:

Սակայն չէր կարելի բոլորովին հանգնել քրիստոնէութեան կոմմունիստական գաղափարները, քանի որ գոյութիւն ունէին նրանց ծնող սոցիալական յարաբերութիւնները: Քանի որ գոյութիւն ունէր հռովմէական պետութիւնը, ազգերի գաղթի շրջանից առաջ և նրա սկզբում եկեղեցական գոյքը աղքատներին հաս էր համարուում (patrimonium pauperum), և ոչ մերժապետի, ոչ մի ժաղովի մտքովն էլ չէր անցնի բացասել այդ: Ի հարկէ՝ այդ գոյքի կառավարութեան համար շատ ծախը էր պահանջուում, այդ ժամաները ծածկում էին մինչև անդամ ամբողջ եկամուռը, — բայց արդէն այդպէս է բարեգործական հաստատութիւնների մեծամասնութեան յատկութիւնը: Այդ պատճառով ոչ ոք էլ չէր համարձակուի պնդելու, որ կառավարեցները գոյքի սեպհականատէրեր են դառնում:

Այդ վերջին քայլը, որ եկեղեցու կոմմունիստական ծառագումը բոլորովին պէտք է նսեմացնէր, միայն նրանից յետոյ կատարուեցաւ, երբ նորեկ գերմանացիք հռովմէական պետութիւնը, նրա հետ էլ եկեղեցին բոլորովին նոր հիմունքների վը բայց գըն:

Թարգ. ի. Ա.

(Նարու հակելի):